

2020թ.

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

Ընկերության անվանումը՝	«Մաքուր երկաթի գործարան» բաց բաժնետիրական ընկերություն
Հասցեն՝	ՀՀ, ք. Երևան, Արցախի 75
Հեռ.	(374 11) 474260
Ֆաքս՝	(374 11) 478707
Էլ. փոստը՝	info@pureironplant.am
Ինտերնետային կայքը՝	www.pureironplant.am


Հավելված 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

1. Ընկերության տնօրենների խորհրդի նախագահի ներածական խոսքը

Կարևորելով Ընկերության երկարաժամկետ կայուն զարգացումը, բաժնետերերի և այլ շահառուների շահերի պաշտպանվածությունը և Ընկերության նկատմամբ նրանց վստահության ամրապնդումը, ինչպես նաև Ընկերության գործունեության թափանցիկության ապահովումը՝ Ընկերությունը՝ որպես հաշվետու թողարկող, շարունակաբար հետևելու է ՀՀ Կառավարության 30.12.2010թ. թիվ 1769-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Կորպորատիվ կառավարման կանոնագրքի դրույթներին:

2. Ընկերության կորպորատիվ կառուցվածքը

Ընկերության կորպորատիվ կառավարման կառուցվածքն ունի ներքոնշյալ տեսքը.



Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը բաժնետերերի ընդհանուր ժողովն է: Ժողովի իրավասությանն են պատկանում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Ընկերության կանոնադրությամբ, Ընկերության Բաժնետերերի ընդհանուր ժողովի վարման կարգով և ներքին այլ կանոններով նախատեսված հարցերը, բացառությամբ այն հարցերի, որոնք նույն իրավական ակտերով, իսկ դրանցով նախատեսված դեպքերում՝ նաև ժողովի որոշմամբ վերապահված են Ընկերության տնօրենների խորհրդի, գործադիր մարմնի և վերստուգող հանձնաժողովի իրավասություններին:

Ընկերության տնօրենների խորհուրդը (խորհուրդը) ընկերության կառավարման համակարգում ստանձնում է առաջնորդող դիրքեր և որոշումներ կայացնում ընկերության ռազմավարական կառավարման հարցերի վերաբերյալ: Տնօրենների խորհուրդը կորպորատիվ ռազմավարության իրագործման հետ մեկտեղ վերահսկում է ընկերության ընթացիկ ղեկավարման արդյունավետությունը: Նա պատասխանատու է ընկերության կայուն զարգացման համար: Ընկերությունն ունի տնօրենների խորհրդի կանոնակարգ:

Ընկերության տնօրենների խորհրդին կից հանձնաժողովներ չեն ձևավորվել:

Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է միանձնյա գործադիր մարմինը՝ գլխավոր տնօրենը, որն իրավունք ունի որոշումներ ընդունել Ընկերության գործունեության բոլոր այն հարցերի առնչությամբ, որոնք «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով, Ընկերության կանոնադրությամբ, Ընկերության խորհրդի կանոնակարգով, վերապահված չեն բաժնետերերի ընդհանուր ժողովի կամ Ընկերության խորհրդի իրավասությանը: Իր գործունեության ընթացքում գլխավոր տնօրենը հաշվետու է ընդհանուր ժողովին և խորհրդին: Ընկերությունն ունի գլխավոր տնօրենի կանոնակարգ:

Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացնում է Ընկերության վերստուգող հանձնաժողովը: Ընկերությունն ունի վերստուգող հանձնաժողովի կանոնակարգ:

Ընկերության նշանակալից բաժնետերերն օտարերկրյա իրավաբանական անձինք են: Դրանք են՝

- 1) Քրոնիմետ երկաթաձուլվածքների Առևտրային ՍՊԸ (ԳԴՀ, Կարլսրուհե, Զյուլթեկենշտոասե 22), որը հաշվետու ժամանակահատվածի վերջին օրվա դրությամբ տիրապետել է Ընկերության 35223 հասարակ անվանական բաժնետոմսերի, ինչը կազմում է Ընկերության կանոնադրական կապիտալի 50.979%-ը:
- 2) ՔՐՈՆԻՄԵՏ Հոլդինգ ՍՊԸ (ԳԴՀ, Կարլսրուհե, Զյուլթեկենշտոասե 22), հաշվետու ժամանակահատվածի վերջին օրվա դրությամբ տիրապետել է Ընկերության 33639 հասարակ անվանական բաժնետոմսերի, ինչը կազմում է Ընկերության կանոնադրական կապիտալի 48.686%-ը:

3. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողով

Հաշվետու տարում Ընկերությունը գումարել է տարեկան ընդհանուր ժողով և երեք արտահերթ ընդհանուր ժողով:

Ընկերության տարեկան ընդհանուր ժողովը գումարվել է 2020թ. մայիսի 25-ին, ՀՀ, ք. Երևան, Խորենացու 15 հասցեում («ԷԼԻՏ ՊԼԱՋԱ» բիզնես կենտրոն), հետևյալ օրակարգով.

- Ընկերության 2019 թվականի տարեկան հաշվետվությունների, այդ թվում՝ ֆինանսական հաշվետվությունների և կորպորատիվ կառավարման տարեկան հայտարարագրի, հաստատման հարցը,
- Ընկերության տարեկան շահութաբաժինների վճարման, տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի հաստատման հարցը,
- Ընկերության Խորհրդի քանակական կազմի փոփոխության հաստատումը,
- Տնօրենների խորհրդի անդամների ընտրության հարցը,
- Ընկերության Խորհրդի անդամների աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը
- Վերստուգող հանձնաժողովի անդամների ընտրության հարցը,
- Կնքված և/կամ կնքվելիք խոշոր գործարքների հաստատման հարցը:
- ՀՀ օրենսդրության փոփոխությանը համապատասխան Ընկերության կանոնադրության փոփոխության հաստատման հարցը:

Խորհուրդը սահմանել է Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի նախապատրաստման ընթացքում բաժնետերերին տրամադրվող տեղեկությունների և փաստաթղթերի ցանկը, որը ներառել է՝

- Ընկերության 2019 թվականի տարեկան հաշվետվությունների, այդ թվում՝ ֆինանսական հաշվետվությունները և կորպորատիվ կառավարման տարեկան հայտարարագիրը
- Ընկերության 2019 թվականի տարեկան ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների վերաբերյալ Ընկերության արտաքին աուդիտորի և վերստուգող հանձնաժողովի եզրակացությունը.
- Ընկերության տարեկան շահութաբաժինների վճարման կարգի ու պայմանների նախագիծը.
- Ընկերության տնօրենների խորհրդի իրական ժամանակի ռեժիմով նիստի արձանագրությունը (28.04.2020թ):

Խորհրդի որոշմամբ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի նախապատրաստման ընթացքում տրամադրվող տեղեկություններին և քննարկվելիք նյութերին բաժնետերերը հնարավորություն են ունեցել ծանոթանալ Ընկերության գտնվելու վայրում՝ ՀՀ, ք. Երևան, Արցախի 75 հասցեում:

Համաձայն ՀՀ օրենսդրության՝ Ընկերության բաժնետերերը ընդհանուր ժողովում մասնակցելու իրենց իրավունքն իրականացրել են անձամբ կամ լիազորված ներկայացուցչի միջոցով: Ընկերությունը լիազորված ներկայացուցչի համար չունի լիազորագրերի մշակված ձևաչափեր:

1-ին արտահերթ ընդհանուր ժողովը գումարվել է 21.07.2020թ.՝ հետևյալ օրակարգով.

1. Տնօրենների խորհրդի անդամ Ս. Քոսյանի լիազորությունները որպես

խորհրդի անդամ վաղաժամկետ դադարեցնելու հարցը:

2. Բերնադո Մարիա Կունսմանին խորհրդի նոր անդամ ընտրելու հարցը:

2-րդ արտահերթ ընդհանուր ժողովը գումարվել է 24.11.2020թ.՝ հետևյալ օրակարգով.

«ԷՐՆՍԹ ԸՆԴ ՅԱՆԳ» փակ բաժնետիրական ընկերության (<http://www.ey.com/am>) որպես Ընկերության 2019 թվականի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացնող անձի հաստատում:

4. Ընկերության տնօրենների խորհուրդ (Խորհուրդ)

4.1. Խորհրդի գործառնությունները

Տնօրենների խորհրդի բացառիկ իրավասությանը ենթակա հարցերի շրջանակը նախատեսված է «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով, Ընկերության կանոնադրությամբ, Ընկերության տնօրենների խորհրդի կանոնակարգով և այլ իրավական ակտերով: Ընկերության տնօրենների խորհրդի կանոնակարգով Ընկերության տնօրենների խորհրդի իրավասությունները խմբավորված են հետևյալ խմբերում՝

- Ընկերության ռազմավարական կառավարում,
- Ընկերության գույքի և կապիտալի կառավարում,
- Կորպորատիվ գործողություններ,
- Ընկերության գլխավոր տնօրենի նշանակում և նրա գործունեության նկատմամբ հսկողության սահմանում,
- Բաժնետերերի ընդհանուր ժողովի նախապատրաստման և անցկացման հարցերի հետ կապված որոշումների ընդունում:

Նշված փաստաթուղթը դեռևս հասանելի չէ Ընկերության ինտերնետային կայքում: Ընկերությունն աշխատում է իր ինտերնետային նոր կայքի վրա և նախատեսում է դրանում ձևավորել «Կորպորատիվ կառավարում» բաժին, որում կտեղադրվեն Ընկերության կորպորատիվ կառավարման համակարգին վերաբերող տեղեկություններն ու նյութերը:

4.2. Խորհրդի կազմը

Ընկերության տնօրենների խորհրդի քանակական կազմը 6 անդամ է:

Պաշտոնը և անունը	Գործադիր	Ոչ գործադիր	Անկախ	Խորհրդում գրադեցրած պաշտոնը սկսած
Խորհրդի նախագահ				
Թումաս Հայլ		v		20.05.2019թ. վերընտրվել է 25.05.2020թ.
Խորհրդի անդամ				
Միկել Պոլսկով		v		17.11.2014թ. վերընտրվել է 25.05.2020թ.
Արամ Մամյան	Արտադրության գծով տնօրեն			12.06.2017թ. վերընտրվել է 25.05.2020թ.
Տիգրան Մամիկոնյան			v	ընտրվել է 25.05.2020թ.
Պետար Կոստովիչ			v	ընտրվել է 25.05.2020թ.
Բերնարդ Մարիա Կունսման		v		ընտրվել է 25.05.2020թ.

Ընկերության տնօրենների խորհրդի գործադիր անդամները Ընկերությունում մեծամասնություն չեն կազմում:

Պաշտոնը և անունը	Ծննդյան օրը, ամիս, տարեթիվ	Կրթություն	Անձնական պարտականություններ	Բաժնետոմսերի քանակը	Քաղաքացիությունը
Խորհրդի նախագահ					
Թումաս Հայլ	28.03.1960թ.	Բիզնեսի կառավարման մագիստրոս	Տնօրենների խորհրդի աշխատանքներ -ի կազմակերպում և ղեկավարում	-	ԳԴՀ

Խորհրդի անդամ					
Մհեր Պոլոսկով	28.08.1970թ.	Բարձրագույն, Ֆրանկֆուրտի տեխնիկական համալսարան Ինժեներ	-	-	ՌԴ
Արամ Մամյան	01.01.1979թ.	Բարձրագույն, Երևանի Պետական Պոլիտեխնիկական ինստիտուտի քիմիական բաժինը	-	-	ՀՀ
Տիգրան Մամիկոնյան	28.01.1988թ.	Բարձրագույն, Ճարտարագիտության և Շինարարության Հայաստանի ազգային համալսարան Ճարտարագետ-կոնստրուկտոր	-		ՀՀ
Պետար Կոստովիչ	15.06.1987թ.	Բարձրագույն, Հոֆենհայմի համալսարան շրջակա միջավայրի պահպանության ֆակուլտետը	-		ԳԴՀ
Բերնառդ Մարիա Կունսման	15.03.1964թ.	Բարձրագույն, Մանհայմի համալսարան, բիզնեսի կառավում	-		ԳԴՀ

Տնօրենների խորհրդի անդամները, բացառությամբ տնօրենների խորհրդի նախագահի, չունեն պաշտոնի նկարագրեր: Ընկերության տնօրենների խորհրդի նախագահի պաշտոնի նկարագիրը սահմանված է Ընկերության տնօրենների խորհրդի կանոնակարգով:

Տնօրենների խորհրդի անդամներից վարձատրվում են Պետար Կոստովիչը և Տիգրան Մամիկոնյանը, իսկ մնացած անդամները իրենց պարտականությունները կատարելու համար չեն վարձատրվում: Որպես ընթացիկ գործունեության ղեկավարման մեջ ներգրավված անձինք վարձատրվել են նաև Ընկերության տնօրենների խորհրդի գործադիր անդամները:

4.3. Խորհրդի գործունեությունը

Հաշվետու տարվա ընթացքում խորհուրդը գումարել է 3 նիստ:

4.4. Խորհրդի աշխատանքի գնահատումը

Ընկերության տնօրենների խորհուրդը չի ընդունել իր գործունեության գնահատման քաղաքականություն, հաշվետու ժամանակահատվածում չի իրականացրել իր գործունեության գնահատում՝ ինչպես ինքնագնահատման, այնպես էլ արտաքին գնահատողի ներգրավման միջոցով:

5. Ընկերության տնօրենների խորհրդի հանձնաժողովները

Ընկերության տնօրենների խորհրդին կից հանձնաժողովներ չեն ձևավորվել:

6. Ընկերության գործադիր մարմին

Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է միանձնյա գործադիր մարմինը՝ գլխավոր տնօրենը:

Պաշտոնը և անունը	Ծննդյան օրը, ամիս, տարեթիվ	Կրթություն	Բաժնետոմսերի քանակը
Կարեն Հակոբյան	31.08.1973թ.	Բարձրագույն, ավարտել է Հայաստանի Ազգային Ագրարային Համալսարանը,	-
Վալերի Թամրազով	05.07.1977թ.	Բարձրագույն, ավարտել է Երևանի Պետական Տնտեսագիտական համալսարանը	-

7. Ընկերության ներքին աուդիտ

Ընկերության ներքին աուդիտ իրականացնող անձ չունի: Ներքին աուդիտին բնութագրական գործառույթներ իրականացնում է Ընկերության վերստուգող հանձնաժողովը: Ընկերության վերստուգող հանձնաժողովի կազմն է՝ Սիեզֆրիեդ Գրուպպ, Գաբրիել Էրբս, Նանե Խաչատրյան:

8. Ընկերության կորպորատիվ քարտուղար

Ընկերության կորպորատիվ քարտուղարի գործառույթները իրականացրել է Միքայել Ներսիսյանը:

9. Արտաքին աուդիտ

Ընկերության 2020թ. ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացրել է «ԷՐՆՍԹ ԸՆԴ ՅԱՆԳ» ՓԲԸ-ի կողմից: Աուդիտորական ընկերությունը ընտրվել է

		Ազրարային Համալսարանը, Բարձրագույն, ավարտել է Երևանի Պետական Տնտեսագիտական համալսարանը	
Վալերի Թամրազով	05.07.1977թ.		-

7. Ընկերության ներքին աուդիտ

Ընկերության ներքին աուդիտ իրականացնող անձ չունի: Ներքին աուդիտին բնութագրական գործառույթներ իրականացնում է Ընկերության վերստուգող հանձնաժողովը: Ընկերության վերստուգող հանձնաժողովի կազմն է՝ Սիեզֆրիեդ Գրուպպ, Գաբրիել Էրբս, Նանե Խաչատրյան:

8. Ընկերության կորպորատիվ քարտուղար

Ընկերության կորպորատիվ քարտուղարի գործառույթները իրականացրել է Միքայել Ներսիսյանը:

9. Արտաքին աուդիտ

Ընկերության 2020թ. ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացրել է «ԷԴՆՍԹ ԸՆԴ ՅԱՆԳ» ՓԲԸ-ի կողմից: Աուդիտորական ընկերությունը ընտրվել է մրցութային կարգով: Ընկերությունն ունի Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացնող անձանց ներկայացվող չափանիշների և դրանց կիրառումն ապահովող ընթացակարգ: Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի վարձատրության չափը սահմանել է խորհուրդը, և այն կազմել է 11 000 000 ՀՀ դրամ (առանց ԱԱՀ):

10. Տարեկան հաշվետվություն

Ընկերության տարեկան հաշվետվությունը տնօրենների խորհրդի ներկայացմամբ հաստատվում է Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովում: Տարեկան հաշվետվությունը բացահայտվում է Ընկերության ինտերնետային կայքում:

Գլխավոր տնօրեն
Կարեն Հակոբյան

Հավելված 2. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

#	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք Հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություններ
Բաժնետերերի ընդհանուր ժողովի (ԲԸԺ) իրավասությունները և բաժնետերերի իրավունքները			
1	Ընկերության կանոնադրությունը նախատեսում է հստակ ընթացակարգեր, որոնք բաժնետերերին հնարավորություն են ընձեռում հաղորդակցվել ԲԸԺ-ից առաջ և քննարկել քվեարկության հարցերը:	Ոչ	Ընկերության կանոնադրությունը չի բովանդակում հստակ ընթացակարգեր, որոնք բաժնետերերին հնարավորություն են ընձեռում հաղորդակցվել ԲԸԺ-ից առաջ և քննարկել օրակարգային հարցերը, սակայն նրանք ունեն փաստացի հնարավորություն ծանոթանալ ժողովի նախապատրաստման ընթացքում բաժնետերերին տրամադրվող տեղեկություններին և նյութերին:
2	ԲԸԺ-ի օրակարգը և համապատասխան այլ փաստաթղթերը բաժնետերերը ստացել են ԲԸԺ-ից առնվազն 21 օր առաջ:	Այո	
3	ԲԸԺ-ի օրակարգը ներառում է քվեարկության դրվելիք հարցերի վերաբերյալ որոշումների նախագծերը, ինչպես նաև Խորհրդի կողմից ԲԸԺ-ի հաստատմանը ներկայացված աուդիտի իրականացնող անձի անունը:	Այո	
4	Ընկերության կանոնադրությունը սահմանում է հստակ ընթացակարգեր, որոնք բաժնետերերին հնարավորություն են ընձեռում քվեարկել հեռակա կարգով (օր. Էլեկտրոնային քվեարկությամբ):	Այո	Հեռակա կարգով (հարցման միջոցով) բաժնետերերի քվեարկության հնարավորությունը սահմանվում է նաև Ընկերության Բաժնետերերի ընդհանուր ժողովի անցկացման կարգով:
5	Ընկերության կանոնադրությունը սահմանում է հստակ ընթացակարգեր, որոնք բաժնետերերին հնարավորություն են ընձեռում նշանակել ներկայացուցիչ:	Ոչ	ՀՀ օրենսդրությունը բաժնետերերին հնարավորություն է ընձեռում ժողովին մասնակցել լիազորված ներկայացուցչի միջոցով, և գործնականում բաժնետերերը կարող են օրենսդրությամբ սահմանված կարգով նշանակել լիազորված ներկայացուցիչ:
6	Արդյոք բաժնետերերը ԲԸԺ-ում քվեարկում են քվեաթերթիկների միջոցով: (Այս կարգը կարող է չգործել միայն մեկ բաժնետեր ունեցող ընկերությունների դեպքում):	Այո	

7	Արդյոք բաժնետերերը իրավունք ունեն հարցեր տալ ժողովի գումարումից մինչև 10 օր առաջ:	Այո	
8	Արդյոք Խորհուրդը Ժողովի ժամանակ պատասխանել է բաժնետերերի հարցերին:	Այո	Ընկերության ընդհանուր ժողովներում քաջալերվում է բաժնետերերի կողմից հարցեր տալու մշակույթը, և Ընկերության խորհրդի անդամներն ու գլխավոր տնօրենը մեծ պատրաստակամությամբ պատասխանում են բաժնետերերի կողմից բարձրացված հարցերին:
9	Արդյոք բաժնետերերն իրավունք ունեն հարցեր տալու Ժողովի ժամանակ:	Այո	Ընկերության ընդհանուր ժողովներում քաջալերվում է բաժնետերերի կողմից հարցեր տալու մշակույթը, և Ընկերության խորհրդի անդամներն ու գլխավոր տնօրենը մեծ պատրաստակամությամբ պատասխանում են բաժնետերերի կողմից բարձրացված հարցերին:
10	Արդյոք Խորհուրդը պատասխանել է առաջադրված բոլոր հարցերին:	Այո	Ընկերության խորհուրդը մեծ պատրաստակամությամբ պատասխանում է բաժնետերերի կողմից բարձրացված հարցերին:

Շահութաբաժինների վճարման քաղաքականություն

11	Ընկերությունն ունի շահութաբաժինների վճարման քաղաքականություն, որը մշակվել է խորհրդի կողմից, հաստատվել է ԲԸԺ-ում և հրապարակվել է Ընկերության ինտերնետային կայքում:	Ոչ	Ընկերությունը չունի շահութաբաժինների վճարման փաստաթղթավորված քաղաքականություն:
12	Շահութաբաժինների վճարման քաղաքականությունը ներառում է վճարվելիք շահութաբաժնի նվազագույն գործակիցը (payout- ratio):	Ոչ	Ընկերությունը չունի շահութաբաժինների վճարման փաստաթղթավորված քաղաքականություն:

Տնօրենների խորհուրդ

13	Ընկերությունը հիմնադրել է հստակ պարտականություններով և գործառույթներով օժտված խորհուրդ, որի մասին հրապարակված է ընկերության ինտերնետային կայքում:	Ոչ	Ընկերության խորհրդի պարտականություններն ու գործառույթները սահմանված են կանոնադրությամբ, ինչպես նաև Տնօրենների խորհրդի գործունեության կանոնակարգով, սակայն ինտերնետային կայքում դրանք հրապարակված չեն: Ընկերությունը նախատեսում է դրանք հրապարակել մինչև 2021թ. ավարտը:
14	Արդյոք Խորհուրդը կազմում է հաշվետվություն Կանոնադրքի դրույթներին Ընկերության հետևելու վերաբերյալ:	Ոչ	
15	Արդյոք Խորհուրդը նշանակում և ազատում է գործադիր	Այո	Ընկերության խորհուրդը ձևավորել է միանձնյա գործադիր մարմին՝ գլխավոր տնօրեն:

	մարմնի ղեկավարին, ինչպես նաև ձևավորում է կոլեգիալ գործադիր մարմին (այդպիսին նախատեսված լինելու դեպքում), նշանակում և ազատում դրա անդամներին:		
16	Արդյոք Խորհրդում ոչ գործադիր անդամները կազմում են մեծամասնություն, և արդյոք նրանցից առնվազն երկուսը անկախ են:	Այո/ոչ	Խորհրդի ոչ գործադիր անդամները խորհրդում կազմում են մեծամասնություն և Խորհրդում ներկա են վեց անդամ, որից երեքը անկախ անդամ են:
17	Խորհրդի հանձնաժողովները տարեկան մեկ անգամ անցկացնում են Ընկերության ներքին կորպորատիվ փաստաթղթերի (կանոնադրություն, կանոնակարգեր և այլ) իրենց իրավասության ոլորտին վերաբերող դրույթների փորձաքննություն և համապատասխան փոփոխությունների վերաբերյալ առաջարկություններ են ներկայացնում խորհրդին:	Ոչ	Խորհրդին կից հանձնաժողովներ չեն ձևավորվել:
18	Խորհրդի հանձնաժողովները պարբերաբար, սակայն ոչ պակաս, քան եռամսյակը մեկ անգամ հաշվետվություն են ներկայացնում խորհրդին: Հանձնաժողովները այդպիսի հաշվետվություն են ներկայացնում յուրաքանչյուր նիստից հետո՝ պատեհ ժամկետում: Հանձնաժողովների նիստերը պետք է նախորդեն Խորհրդի հերթական նիստերին:	Ոչ	Խորհրդին կից հանձնաժողովներ չեն ձևավորվել:
19	Խորհրդի հանձնաժողովների անդամները պետք է մասնակցեն հանձնաժողովի գործունեությանը և աշխատանքներին և ներկա գտնվեն բոլոր նիստերին:	Ոչ	Խորհրդին կից հանձնաժողովներ չեն ձևավորվել:
Խորհրդի անդամների նշանակումը			
20	Խորհրդի անդամների թեկնածությունների առաջադրումը ԲԸԺ-ին գուցակցված է	Ոչ	Բաժնետերերին ներկայացվում է միայն խորհրդի անդամների կենսագրական տվյալները: Իսկ ինչ վերաբերում է խորհրդի անդամների պաշտոնի

	առաջադրված թեկնածուի պաշտոնի նկարագրով և համառոտ կենսագրականով, որտեղ շարադրված են ստանձնվելիք պարտականությունները, գործառույթները և կենսագրական տվյալները:		նկարագրին, ապա դա սահմանված չէ: Ընկերությունը նախատեսում է խորհրդի անդամների պաշտոնների նկարագիրը սահմանել մինչև 2021թ.-ի ավարտը:
21	Խորհրդի անդամների առաջադրված թեկնածուների պաշտոնի նկարագիրը և համառոտ կենսագրականները հրապարակվել են Ընկերության ինտերնետային կայքում՝ ԲԸԺ-ից առնվազն 30 օր առաջ:	Ոչ	Խորհրդի անդամների առաջադրված թեկնածուների պաշտոնի նկարագիրը և համառոտ կենսագրականները չեն հրապարակվում են Ընկերության ինտերնետային էջում, քանի որ Ընկերությունը չունի խորհրդի անդամների պաշտոնների նկարագրեր: Բաժնետերերին ներկայացվում են խորհրդի անդամների կենսագրական տվյալները և փորձառությունը:

Խորհուրդ. գործունեության մոնիթորինգ

22	Խորհուրդը, համաձայն գնահատման քաղաքականության, դիտարկում է գործադիր մարմնի գործունեությունը:	Ոչ	Ընկերությունը չունի գործադիր մարմնի գնահատման քաղաքականություն: Նախատեսվում է նման քաղաքականություն ներդնել մինչև 2021թ.-ի ավարտը:
23	Խորհուրդն իրականացնում է իր գործունեության արդյունավետության տարեկան գնահատում՝ համաձայն հաստատված գնահատման քաղաքականության:	Ոչ	Ընկերությունը չունի սեփական արդյունավետության գնահատման քաղաքականություն: Նախատեսվում է նման քաղաքականություն ներդնել մինչև 2021թ.-ի ավարտը:

Խորհրդի նիստերի հաճախելիությունը

24	Խորհրդի նիստերին խորհրդի անդամների մասնակցության մասին տվյալները ներառված են ԿԿ Հայտարարագրի նկարագրական մասում և/կամ ընկերության տարեկան հաշվետվությունում:	Ոչ	
----	--	----	--

Խորհրդի նիստերի տարեկան պլանը

25	Ցուցակված ընկերությունների և ՊԸ-ների խորհրդի նիստերը պետք է հրավիրվեն նվազագույնը եռամսյակը մեկ անգամ:	Այո	Խորհրդի նիստերը գումարվում են դրանց անհրաժեշտությունն առաջանալու դեպքում: Հաշվետու ժամանակահատվածում հրավիրվել է խորհրդի 3 երեք:
26	Խորհրդի նիստերը գումարվում են համաձայն հաստատված տարեկան պլանի: Խորհրդի նիստերի օրակարգը և դրան ուղեկցող փաստաթղթերը	Ոչ	Խորհուրդը չունի տարեկան աշխատանքային պլան, սակայն հաշվի առնելով նախորդ ժամանակահատվածի փորձը, ինչպես նաև Ընկերության տարեկան ծրագրերը՝ նախատեսվում է ձևավորել աշխատանքային պլան

	Խորհրդին անդամներին է ուղարկվում նիստի օրվանից առնվազն 10 օր առաջ:		2021թ. համար:
--	--	--	---------------

Խորհրդի նախագահը

27	Խորհրդի նախագահի և գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնները չեն համատեղվում:	Այո	Խորհրդի նախագահի և գլխավոր տնօրենի պաշտոնները չեն համատեղվում:
28	Ընկերության կանոնադրությամբ հստակ տարանջատված են Խորհրդի նախագահի և գլխավոր գործադիր տնօրենի իրավասությունները:	Այո	Խորհրդի նախագահի և գլխավոր տնօրենի իրավասությունները տարանջատված են ոչ միայն կանոնադրությամբ, այլև ներքին իրավական ակտերով:
29	Խորհրդի նախագահը պատասխանատու է, որպեսզի խորհրդի նորընտիր անդամներն իրենց պաշտոնավարման սկզբում պատշաճ ծանուցվեն ընկերության և իրենց պարտականությունների մասին:	Այո	Խորհրդի նախագահը խորհրդի նորընտիր անդամներին պատշաճ ներկայացնում է վերջիններիս իրավունքներն ու պարտականությունները:
30	Ընկերությունն ունի խորհրդի անդամների համար նախատեսված ուսուցման ծրագրեր:	Ոչ	Ընկերությունը չունի խորհրդի անդամների համար նախատեսված ուսուցման ծրագրեր, սակայն նախատեսվում է նման ծրագրի մշակում մինչև 2021թ. ավարտը:

Խորհրդի անդամների գործունեության վնասների ապահովագրումը և նրանց ազատումը պատասխանատվությունից

31	Ընկերության կանոնադրությունը դրույթներ է պարունակում խորհրդի անդամներին այն վնասների փոխհատուցումից ազատելու վերաբերյալ, որոնք վրա են հասել նրանց պաշտոնական պարտականությունների իրականացման հետևանքով: Ընկերությունը ապահովագրվել է Խորհրդի անդամների գործունեության վնասների ռիսկից:	Ոչ	Ընկերության կանոնադրությունը նման դրույթներ չի պարունակում: Ռիսկերի ապահովագրությունն նույնպես նախատեսված չէ: Խորհրդի անդամների գործունեության վնասների ապահովագրումն իրականացնելուց առաջ Ընկերությունը նախատեսում է ուսումնասիրել հայկական ֆինանսական շուկայի հնարավորությունները և առաջարկվող ապահովագրական ծառայությունները:
----	---	----	---

Աուդիտի հանձնաժողով

32	Ընկերությունները պարտավոր են ստեղծել խորհրդի ոչ գործադիր անդամներից բաղկացած աուդիտի հանձնաժողով, որտեղ մեծամասնությունը, ինչպես նաև հանձնաժողովի նախագահը պետք է լինեն անկախ:	Ոչ	Ընկերությունը չի ձևավորել աուդիտի հանձնաժողով: Առաջիկա տարիների համար ևս Ընկերությունը չի նախատեսում ձևավորել նման հանձնաժողով:
33	Աուդիտի հանձնաժողովի բոլոր	Ոչ	Ընկերությունը չի ձևավորել աուդիտի

	անդամները համապատասխան որակավորում ունեն ֆինանսների, հաշվապահության, աուդիտի և ներքին հսկողության հարցերում:		հանձնաժողով:
34	Աուդիտի հանձնաժողովը հետևում է ընկերության ֆինանսական հաշվետվությունների ամբողջականությանը և ընկերության ֆինանսական գործունեությանը վերաբերվող հայտարարություններին՝ դիտարկելով դրանցում տեղ գտած կարևոր պնդումները ֆինանսական հաշվետվողականության վերաբերյալ, վերանայում եռամսյակային և տարեկան հաշվետվությունները և Խորհրդին ու ԲԸԺ-ին առաջարկություն ներկայացնում դրանց հաստատման վերաբերյալ:	Ոչ	Ընկերությունը չի ձևավորել աուդիտի հանձնաժողով: Ընկերության տարեկան հաշվետվությունների վերաբերյալ եզրակացություն է տալիս Ընկերության վերստուգող հանձնաժողովը:
35	Աուդիտի հանձնաժողովը նվազագույնը տարեկան մեկ անգամ հանդիպում է արտաքին աուդիտին իրականացնող անձին՝ քննարկելու աուդիտի հետ կապված հարցերը:	Ոչ	Ընկերությունը չի ձևավորել աուդիտի հանձնաժողով:
36	Աուդիտի հանձնաժողովը պատասխանատու է վերանայելու ընկերության ներքին վերահսկողության, ներքին աուդիտի, ինչպես նաև ռիսկերի կառավարման համակարգերը:	Ոչ	Ընկերությունը չի ձևավորել աուդիտի հանձնաժողով:
37	Աուդիտի հանձնաժողովը պատասխանատու է արտաքին աուդիտին իրականացնող անձի ընտրության, նրա աշխատանքի պայմանների վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել Խորհրդին, դրանք՝ ԲԸԺ-ի ընդհանուր ժողովի քննարկմանը և վերջնական հաստատմանը ներկայացնելու համար:	Ոչ	Ընկերությունը չի ձևավորել աուդիտի հանձնաժողով: Ընկերության արտաքին աուդիտին իրականացնող անձի ընտրության պատասխանատուն Ընկերության Խորհուրդն է:
38	Աուդիտի հանձնաժողովը մշակել է արտաքին աուդիտին իրականացնող անձի անկախության չափորոշիչներ	Ոչ/Այո	Ընկերությունը չի ձևավորել աուդիտի հանձնաժողով, սակայն Ընկերության արտաքին աուդիտին իրականացնող անձի անկախության չափորոշիչները հաստատված են Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության աուդիտին

			իրականացնող անձանց ներկայացվող չափանիշների և դրանց կիրառումն ապահովող ընթացակարգով:
39	Աուդիտի հանձնաժողովը դիտարկել է արտաքին աուդիտին իրականացնող անձի անկախությունը՝ համաձայն հաստատված չափորոշիչների, և արդյունքները ներառվել են տարեկան հաշվետվությունում:	Ոչ	Ընկերությունը չի ձևավորել աուդիտի հանձնաժողով:
40	Աուդիտի հանձնաժողովը պահում է իր նիստերի արձանագրությունները:	Ոչ	Ընկերությունը չի ձևավորել աուդիտի հանձնաժողով:

Ներքին աուդիտ

41	Ներքին աուդիտին իրականացնող անձը նշանակվում և ազատվում է Աուդիտի հանձնաժողովի համաձայնությամբ:	Ոչ	Ընկերությունը ներքին աուդիտ իրականացնող անձ չունի: Ընկերությունն ձևավորել է վերստուգող հանձնաժողով, որն իրականացնում է ներքին աուդիտորին բնորոշ գործառույթներ:
42	Ներքին աուդիտին իրականացնող անձը անմիջականորեն հաշվետու է Աուդիտի հանձնաժողովին:	Ոչ	Ընկերությունը չի ձևավորել աուդիտի հանձնաժողով և չունի ներքին աուդիտ իրականացնող անձ:
43	Ներքին աուդիտին իրականացնող անձն իր գործունեությունն իրականացնում է համաձայն Աուդիտի հանձնաժողովի կողմից հաստատված տարեկան պլանի և այդ մասին պարբերաբար զեկուցում է Աուդիտի հանձնաժողովին:	Ոչ	Ընկերությունը չի ձևավորել աուդիտի հանձնաժողով և չունի ներքին աուդիտ իրականացնող անձ:
44	Ներքին աուդիտին իրականացնող անձը պատասխանատու է ներքին հսկողության լիարժեքության դիտարկման և ներքին հսկողության ընթացակարգերի իրականացման համար	Ոչ	Ընկերությունը ներքին աուդիտ իրականացնող անձ չունի:

Արտաքին աուդիտ

45	Ընկերության արտաքին աուդիտին իրականացնող անձը չպետք է մատուցի Կանոնագրքի 28-րդ կետի 2) ենթակետի ոչ-աուդիտորական ծառայություններ:	Այո	Ընկերության 2020թ.-ի տարեկան հաշվետվությունների արտաքին աուդիտին իրականացրած անձը՝ «ԷԴՆՍԹ ԸՆԴ ՅԱՆԳ» ՓԲ ընկերությունը, չի մատուցել ոչ-աուդիտորական ծառայություններ:
----	--	-----	--

46	Արտաքին աուդիտն իրականացնող անձի վարձատրության չափը բացահայտվել և հաստատվել է ԲԸԺ-ում:	Այո	Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի ընտրությունը հաստատում է ժողովը, վարձատրության չափը որոշում է խորհուրդը: Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի վարձատրության չափը բացահայտվում է:
47	Ընկերությունը ունի արտաքին աուդիտն իրականացնող անձի ռոտացիայի քաղաքականություն:	Ոչ	Ընկերությունը չունի արտաքին աուդիտն իրականացնող անձի ռոտացիայի փաստաթղթավորված քաղաքականություն, սակայն գործնականում արտաքին աուդիտ իրականացնող անձը ենթարկվում է ռոտացիայի:

Խորհրդի այլ հանձնաժողովները

48	Ընկերությունը ստեղծել է Խորհրդի անդամներից բաղկացած այլ հանձնաժողովներ	Ոչ	Ընկերությունը խորհրդին կից հանձնաժողովներ չունի: Ընկերությունը գտնում է, որ առաջիկա տարիներում Ընկերության կորպորատիվ կառավարման համակարգի բարելավումները չեն ներառելու խորհրդին կից հանձնաժողովների ձևավորումը:
49	Խորհրդի բոլոր հանձնաժողովները գործում են համաձայն իրենց կանոնակարգերի, որտեղ սահմանվում են դրանց գործառույթները, դերն ու պարտականությունները:	Ոչ	Ընկերությունը խորհրդին կից հանձնաժողովներ չունի:
50	Խորհրդի հանձնաժողովները պարբերաբար, սակայն ոչ պակաս, քան եռամսյակը մեկ անգամ հաշվետվություն են ներկայացնում խորհրդին: Հանձնաժողովները այդպիսի հաշվետվություն են ներկայացնում յուրաքանչյուր նիստից հետո՝ պատեհ ժամկետում: Հանձնաժողովների նիստերը պետք է նախորդեն Խորհրդի հերթական նիստերին:	Ոչ	Ընկերությունը խորհրդին կից հանձնաժողովներ չունի:
51	Խորհրդի հանձնաժողովների անդամները պետք է մասնակցեն հանձնաժողովի գործունեությանը և աշխատանքներին և ներկա գտնվեն բոլոր նիստերին:	Ոչ	Ընկերությունը խորհրդին կից հանձնաժողովներ չունի:

Կորպորատիվ քարտուղար

52	Ընկերության խորհուրդը նշանակել է կորպորատիվ քարտուղար, որը հաշվետու է խորհրդին: Կորպորատիվ	Այո	Ընկերության կորպորատիվ քարտուղարի գործառույթներն իրականացրել է Միքայել Ներսիսյանը: Ընկերությունը նախատեսում է կատարելագործել կորպորատիվ քարտուղարի
----	--	-----	--

	քարտուղարը աջակցում է խորհրդի նիստերի կազմակերպմանը, մասնավորապես նիստերի պլանավորմանը, հրավիրմանը, անցկացմանը և արձանագրության վարմանը՝ համաձայն օրենքների և ընկերության ընթացակարգերի: Խորհուրդը սահմանում է կորպորատիվ քարտուղարի պաշտոնի նկարագիրը, ինչպես նաև նրա վարձատրության չափը:		գործառույթը:
53	Կորպորատիվ քարտուղարը աջակցում է Խորհրդի նախագահին՝ դիտարկելու կորպորատիվ կառավարման ոլորտի ՀՀ օրենսդրության, Կանոնագրքի, Ընկերության կանոնադրության և կանոնակարգերի պահանջները Ընկերության կողմից կատարելը:	Ոչ	
Տեղեկատվության բացահայտումը և թափանցիկությունը			
Տարեկան հաշվետվություն			
54	Ընկերությունը կազմել է հաշվետու տարվա տարեկան հաշվետվությունը, որը ներկայացվել է բաժնետերերի հաստատմանը և հրապարակվել է ընկերության ինտերնետային կայքում:	Այո	
55	Տարեկան հաշվետվությունը պարունակում է ֆինանսական հաշվետվություն՝ կազմված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան:	Այո	
56	Տարեկան հաշվետվությունը պարունակում է Ընկերության շահառուներին հասցեագրված տեղեկատվությունը, որը հնարավորություն է տալիս գնահատել ընկերության ներդրումը տնտեսական կայունության, սոցիալական	Ոչ	Ընկերությունը նախատեսում է ոչ ֆինանսական հաշվետվությունների մշակման և հրապարակման պրակտիկան զարգացնել 2021թ.-ի արդյունքներով:

	բարեկեցության և բնապահպանական անվտանգության ապահովման գործում:		
57	Տարեկան հաշվետվությունը պարունակում է տեղեկություն Ընկերության վարքագծի կանոնների վերաբերյալ և հղում ընկերության ինտերնետային կայքին, որտեղ այն տեղադրված է:	Այո	
58	Տարեկան հաշվետվությունը պարունակում է ԿԿ Հայտարարագիրը Կանոնագրքին հետևելու և/կամ մանրամասն բացատրությունը՝ չհետևելու և դրա պատճառների մասին:	Այո	
59	Տարեկան հաշվետվությունը պարունակում է տեղեկություններ Ընկերության հետ փոխկապակցված անձանց հետ կնքված մեկ կամ մի քանի փոխկապակցված գործարքների մասին, որոնց արժեքը գերազանցում է Ընկերության ակտիվների արժեքի 2 տոկոսը՝ մանրամասն ներկայացնելով այդպիսի գործարքների հաստատման կամ վավերացման համար Ընկերության կողմից ընդունված քաղաքականությունը և ընթացակարգերը: Ընկերության և փոխկապակցված անձանց միջև փոխկապակցված այդպիսի գործարքների առկայության դեպքում նաև պետք է ներկայացնել Ընկերության գործարքներում փոխկապակցված անձանց գործարքների համամասնությունը, փոխկապակցված անձանց յուրաքանչյուր խմբի գործարքները, փոխկապակցված անձանց գործարքների պայմանների արդարության գնահատումը: Ընկերության և փոխկապակցված անձանց միջև այդպիսի գործարքների բացակայության	Ոչ	Ընկերության տարեկան հաշվետվությունը պարունակում է տեղեկություններ Ընկերության հետ փոխկապակցված անձանց հետ կնքված մեկ կամ մի քանի փոխկապակցված գործարքների մասին, որոնց արժեքը գերազանցում է Ընկերության ակտիվների արժեքի 10 տոկոսը, սակայն Ընկերությունը չունի այդպիսի գործարքների հաստատման կամ բացահայտման համար Ընկերության կողմից առանձին ընդունված քաղաքականություն և ընթացակարգեր:

	դեպքում պետք է հստակ նշվի այդ մասին:		
60	Տարեկան հաշվետվությունը ներառում է արտաքին աուդիտին իրականացնող անձի եզրակացությունը:	Այո	
61	Տարեկան հաշվետվությունը ներառում է Ընկերության նշանակալից (10%-ից ավելի) բաժնետոմսերին ուղղակիորեն կամ անուղղակիորեն տիրապետող բաժնետերերի ցուցակը:	Այո	
62	Տարեկան հաշվետվությունը ներառում է Ընկերության փոխկապակցված անձանց ցուցակը և փոխկապակցված անձանց հետ կնքված այն գործարքների ցանկը, որոնց արժեքը գերազանցում է Ընկերության ակտիվների արժեքի 2 տոկոսը:	Այո	
63	Տարեկան հաշվետվությունը ներառում է խորհրդի անդամների, այդ թվում՝ անկախ անդամների անունները և հակիրճ կենսագրությունը, այդ թվում՝ տարվա ընթացքում հրաժարական տված և պաշտոնից հեռացված խորհրդի անդամների անունները, տարվա ընթացքում խորհրդի անդամի պաշտոն զբաղեցրած բոլոր անձանց վարձատրության վերաբերյալ տվյալները, ինչպես նաև խորհրդի նիստերին նրանց մասնակցության վերաբերյալ տվյալները:	Այո/ոչ	Ընկերության տարեկան հաշվետվությունը տեղեկատվություն չի բովանդակում խորհրդի նիստերին խորհրդի անդամների մասնակցության վերաբերյալ:
64	Տարեկան հաշվետվությունը ներառում է արտաքին աուդիտին իրականացնող անձանց անունը և վարձատրությունը:	Այո	
65	Տարեկան հաշվետվությունը ներառում է արտաքին աուդիտին իրականացնող անձանց անկախության փաստի ստուգման արդյունքները:	Այո	Ընկերությունն ունի Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության աուդիտին իրականացնող անձանց ներկայացվող չափանիշների և դրանց կիրառումն ապահովող ընթացակարգ:
66	Տարեկան հաշվետվությունը ներառում է Ընկերության	Այո	

	կառավարման կառուցվածքի նկարագրությունը, այդ թվում՝ դուստր ընկերությունների, մասնաճյուղերի, մայր ընկերության, ինչպես նաև քվեարկելու իրավունք տվող բաժնետոմսերի խաչաձև տնօրինումը փոխկապակցված այլ ընկերությունների հետ:		
67	Տարեկան հաշվետվությունը ներառում է տնօրենի ամփոփիչ հաշվետվությունը նախորդ տարվա գործունեության վերաբերյալ, ռիսկային գործոնները, գալիք տարվա հեռանկարները, ընկերության ռազմավարությունը, տարվա ընթացում կնքված խոշոր գործարքները, ձեռնարկատիրական գործունեության հետ կապված գլխավոր փոփոխությունները, բացատրություն նախորդ տարվա ցուցանիշների հետ համեմատած ֆինանսական արդյունքների կարևոր փոփոխությունների վերաբերյալ, շահույթի տեղաբաշխման և բաշխման, այդ թվում շահութաբաժինների վճարման առաջարկությունները:	Այո	
68	Տարեկան հաշվետվությունը ներառում է խորհրդի անդամների, ինչպես նաև գործադիր մարմնի ղեկավարի և գլխավոր հաշվապահի վարձատրությունը:	Այո	
69	Տարեկան հաշվետվությունը ներառում է թողարկված բաժնետոմսերի քանակը և դասը կամ դասերը, և արժեթղթերի համապատասխան դասին տիրապետող բաժնետերերի իրավունքների ամփոփումը:	Այո	Ընկերության կողմից թողարկված բաժնետոմսերը հասարակ անվանական բաժնետոմսեր են և տրամադրում են միևնույն իրավունքները:
Ընկերության ինտերնետային կայքը			
70	Ընկերությունն ունի ինտերնետային կայք, որտեղ	Ոչ	Ընկերության ինտերնետային կայքը կորպորատիվ կառավարման բաժին չունի:

	առանձին բաժին նվիրված է կորպորատիվ կառավարմանը:		
71	Ընկերության ինտերնետային կայքը պետք է պարունակի վերջին 3 տարիների ԿԿ Հայտարարագրերը:	Այո	
72	Ինտերնետային կայքը, կորպորատիվ կառավարման բաժինը և այնտեղ տեղադրված փաստաթղթերը հասանելի են նաև օտար լեզվով:	Ոչ	Ընկերության ինտերնետային կայքը կորպորատիվ կառավարման բաժին չունի:
73	Ընկերության կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված են ընկերության պետական գրանցման վկայականը և կանոնադրությունը՝ բոլոր գործող փոփոխություններով հանդերձ:	Ոչ	Ընկերության ինտերնետային կայքը կորպորատիվ կառավարման բաժին չունի:
74	Ընկերության կայքի կորպորատիվ կառավարման բաժինը տեղեկություններ է պարունակում խորհրդի անդամների և գործադիր մարմնի վերաբերյալ՝ ներառելով նրանց համառոտ կենսագրականները և պաշտոնի նկարագրերը:	Ոչ	Ընկերության ինտերնետային կայքը կորպորատիվ կառավարման բաժին չունի:
75	Ընկերության կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված են խորհրդի, խորհրդի հանձնաժողովների Կանոնակարգերը և կորպորատիվ քարտուղարի պաշտոնի նկարագիրը:	Ոչ	Ընկերության ինտերնետային կայքը կորպորատիվ կառավարման բաժին չունի:
Վարքագծի կանոններ			
76	Ընկերությունն ընդունել է վարքագծի կանոններ:	Այո	
77	Վարքագծի կանոնները դրույթներ են պարունակում կորպորատիվ արժեքների, գործարար վարքագծի, պետության և պաշտոնատար անձանց հետ հարաբերությունների, ինչպես նաև մրցակիցների հետ հարաբերությունների մասին:	Այո	
78	Վարքագծի կանոնները դրույթներ են պարունակում «ահագանգումների», վարքագծի կանոնների խախտման, ինչպես նաև այդ խախտումների մասին	Ոչ	

	հաղորդելիս գաղտնիության պահպանման մասին:		
79	Ընկերությունը նշանակել է պաշտոնյա, ով պատասխանատու է վարքագծի կանոններին հետևելու մոնիթորինգի համար:	Այո/Ոչ	Ընկերությունը չի նշանակել որևէ պաշտոնյա, ով պատասխանատու է Կորպորատիվ վարքականոններին հետևելու համար, սակայն վարքականոնները նախատեսում են, որ նման պաշտոնատար անձանց դերում կարող են հանդես գալ Ընկերության տնօրենների խորհրդի անդամները, գլխավոր տնօրենն ու ստորաբաժանումների ղեկավարները:
Կանոնադրական կապիտալի ավելացումը			
80	Կանոնադրական կապիտալի ավելացման վերաբերյալ որոշումների մասին Խորհուրդը անհապաղ տեղեկացրել է բոլոր բաժնետերերին:	Այո	Ընկերության կանոնադրությամբ կանոնադրական կապիտալի ավելացման իրավասությունը վերապահված չէ խորհրդին: Հետևաբար այդ հարցի վերաբերյալ որոշումը կայացվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:
Շահառուներ			
81	Խորհուրդը սահմանել է այն շահառուների շրջանակը, որոնք համապատասխանում են ընկերության գործունեությանը, օրինական շահեր և սպասելիքներ ունեն Ընկերությունից:	Այո	
82	Ընկերությունը ընդունել է քաղաքականություն՝ միտված շահառուների շահերը և սպասելիքները հաշվի առնելուն:	Այո	
83	Խորհուրդը մշակել և բացահայտել է շահառուների հետ հարաբերությունների հաստատման քաղաքականությունը և ընթացակարգերը և տարեկան կտրվածքով բացահայտում է դրանց իրականացումը:	Այո/ոչ	Ընկերությունը հռչակագրել է շահառուների հետ հարաբերությունների հիմնադրույթներ, սակայն դրանց իրագործման վերաբերյալ տեղեկությունները (ոչ ֆինանսական հաշվետվությունները) նախատեսում է մշակել և հրապարակել 2020թ.-ի արդյունքներով:
84	Շահառուների համար հասանելի են ընկերության ինտերնետային կայքի՝ տարեկան հաշվետվություններին և կորպորատիվ կառավարմանը վերաբերվող բաժինները:	Այո	